

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-2 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «բարձրագույն կոչումներ» բառերը փոխարինել «բարձրագույն և գլխավոր կոչումները» բառերով,

2) 3-րդ մասում.

ա. հանել «գլխավոր,» բառը,

բ. «կոչումներ» բառը փոխարինել «կոչումները» բառով:

Հոդված 2. Օրենքի 31-րդ հոդվածի.

1) 2-րդ մասում «վարչապետը» բառը փոխարինել «կառավարությունը» բառով,

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության ղեկավարի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության ղեկավարի ներկայացմամբ:»:

Հոդված 3. Օրենքի վերնագրում և տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը, բացառությամբ 5-րդ հոդվածի «Ժ» կետում, 32-րդ հոդվածի 10-րդ մասի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով» բառերի, 57-րդ հոդվածի 4-րդ մասի «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերի, 69-րդ հոդվածի 1-ին մասում, 106-րդ հոդվածի 6-րդ մասում և 107-րդ հոդվածի 2-րդ մասում փոխարինել «Արցախի» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	<p align="center">Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</p>
	<p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածը սահմանում է փրկարարական ծառայության կոչումները և դրանք շնորհելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը: Մասնավորապես, սահմանված է, որ «փրկարարական ծառայության գնդապետ» կոչումը փրկարարական ծառայության գլխավոր կոչում է, որը շնորհում է արտակարգ իրավիճակների պետական ծառայության ղեկավարը:</p> <p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը նպատակ ունի համապատասխանեցնել փրկարարական ծառայության գլխավոր՝ գնդապետի կոչում շնորհելու իրավասությունը գործող օրենսդրությամբ ծառայության առանձին տեսակների՝ ոստիկանությունում ծառայության և ազգային անվտանգության մարմիններում ծառայության համար օրենքներով նախատեսված համապատասխան կարգավորումներին: Այսպես՝</p> <ul style="list-style-type: none"> - «Ոստիկանությունում ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոստիկանության բարձրագույն, ինչպես նաև <i>գնդապետի</i> կոչումները շնորհում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը: - «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողների <i>գնդապետի</i> և բարձրագույն սպայական կոչումները շնորհում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը: <p>Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության ղեկավարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության ղեկավարի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության ղեկավարի առաջարկությամբ:</p> <p>Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի</p>

	<p>ՆՀ-108-Ն հրամանագրի հավելվածի 105-րդ կետի համաձայն վերոգրյալ պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է կառավարությունը: Ուստի առաջարկվում է միմյանց համապատասխանեցնել տարբեր իրավական ակտերով սահմանված միևնույն կարգավորումները:</p>
2.	<p align="center">Առաջարկվող կարգավորման բնույթը</p> <p>Նախագծով առաջարկվում է Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել փոփոխություն՝ սահմանելով, որ փրկարարական ծառայության բարձրագույն և գլխավոր կոչումները շնորհում է Հանրապետության Նախագահը: Այդ կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում համապատասխան փոփոխություններ կատարել նաև հոդվածի 3-րդ մասում:</p> <p>Նախագծի 31-րդ հոդվածում առաջարկվում է՝</p> <ul style="list-style-type: none"> - 2-րդ մասում «վարչապետը» բառը փոխարինել «կառավարությունը» բառով, - 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ սահմանելով, որ արտակարգ իրավիճակների պետական ծառայության ղեկավարի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է կառավարությունը՝ արտակարգ իրավիճակների պետական ծառայության ղեկավարի ներկայացմամբ: <p>Նախագծով նախատեսվում է օրենքի ամբողջ տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:</p>
3.	<p align="center">Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</p> <p>Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:</p>
4.	<p align="center">Ակնկալվող արդյունքը</p> <p>Նախագծի ընդունմամբ ակնկալվում է կատարելագործել գործող օրենսդրությունը և համապատասխանեցնել օրենքի առանձին դրույթներ նոր իրավակարգավորումներին:</p>